Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ ՀՀ Շիրակի մարզի «Արևիկի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Առարկա՝ Երաժշտություն

Թեմա՝ Սովորողների մեջ արժեհամակարգի ձևավորումը երաժշտություն առարկայի դասավանդման ընթացքում

Վերապատրաստող, մենթոր՝ Դավիթ Վարժապետյան

Ուսուցիչ՝ Արմինե Դիլբարյան

2023թ.

Բովանդակություն

Ներածություն 3

Գլուխ Ա Արժեքային համակարգ..... 6

Գլուխ Բ Գեղարվեստական կրթությունը և դերը արժեհամակարգի ձևավորման զարգացման գործում.....11

Գլուխ Գ Սովորողների մեջ արժեհամակարգի ձևավորումը երաժշտություն առարկայի դասավանդման ընթացքում.....16

Եզրակացություն.....21

Գրականության ցանկ.....23

Ներածություն

ՆՊԱՏԱԿ. Նոր սերնդի արժեհամակարգի ձևավորման, կրթության և դաստիարակության գործում լուրջ անելիքներ ունի հայ դպրոցը, որի նպատակն է կերտել բարոյական, ազգային արժեքներով օժտված, ազգային նկարագիր ունեցող սերունդ:

Հայաստանի Հանրապետության պետական չափորոշչում՝ որպես կրթության բովանդակային բաղադրիչ ներառված է արժեքային համակարգի ձևավորումը:

Հետևաբար անհրաժեշտ է ուսումնասիրել ու կատարելագործել ոչ միայն հայրենի և համաշխարհային գիտության և արվեստի ճյուղերը՝ այդ թվում՝ երաժշտությունը:

Կարևորությունը. Կարևոր է հաշվի առնել մանկավարժության անցյալի փորձը,ժառանգությունը, բարոյական և հոգևոր արժեքների ձևավորման ու զարգացման գործում նպաստելու համար:

Երգեցողության ժամանակ զարգանում են երեխաների ստեղծագործական ունակությունները: Տարբեր երգերի միջոցով երեխան տեղեկություններ է ստանում բնության երևույթների, շրջապատի մասին,կարողանում է արտահայտվել, պատմել նրա բովանդակությունը, որը և զարգացնում է երեխայի խոսքը, բառապաշարը:

Խնդիրներ. Երգեցողությունը օգնում է երեխայի լեզվական թերությունների վերացմանը, երգելիս բառերը արտասանվում են երկարացված, և այդ հանգամանքը նպաստում է առանձին հնչյունների, բառերի պարզ, արտահայտիչ արտաբերմանը:

Երգեցողությունից է երեխան ստանում իր առաջին երաժշտական տպավորություններն ու զգայական ընկալումը:

Մարդկության զարգացմանը զուգահեռ երաժշտությունը անհատի հոգեկան աշխարհի կամ մի ամբողջ մշակույթը բնութագրող, բացահայտող և ներկայացնող խորհրդանիշ է: Երաժշտության կարևորագույն առանձնահատկությունն այն է, որ այն մարդու զգայարանների վրա թողնում է անմիջական և ուժեղ ազդեցություն:

Ահա թե ինչպես է արտահայտվել երաժշտության ազդեցության մասին մեծն Կոմիտասը.

«Մեկ հասկացված, անկեղծ ձայն հազար ճառ կարժե, որովհետև ճառը պետք է մարսե հասարակությունը, որ կարենա անկե սնունդ առնել, ինչ-որ ժամանակներու գործ է: Իսկ ձայնը վայրկյանին մեջ կթափանցե մարդու կուրծքեն ներս և այնտեղ կհիմնե զգացման և մտքի վառարան »:

Կարևոր է նկատի ունենալ, որ սովորողների գեղարվեստական հմտությունների զարգացումն ու արժեքային համակարգի ձևավորումը դիտվում են որպես բոլոր թեմաների ուսուցմանն ուղեկցող խնդիրներ: Երաժշտությունը կատարյալ միջոց է բոլոր երեխաներին և մասնավորապես՝ կրթական առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին ուսուցման գործընթացում ներառելու համար: Երաժշտական փորձառությունը կարող է նրանց համար արդյունավետ լինել լեզվական, ճանաչողական և շարժողական կարողությունների զարգացման համար՝ միաժամանակ նպաստավոր պայմաններ ստեղծելով սոցիալականացման համար: Արվեստը հասկանալու բանալին առօրեականի և գեղարվեստականի փոխհարաբերության ընկալումն է, սովորողը արվեստի առարկաների դասավանդման ընթացքում իր ստացած գիտելիքների, ձևավորված հմտությունների, վերաբերմունքի և արժեքների շնորհիվ պետք է հասկանա, ընկալի, թե

ինչպես է առօրեականը արվեստի միջոցով դառնում կատարյալ, այսինքն՝ գեղարվեստական:

Ժ. Պիաժեն անձի արժեքային կողմնորոշումների զարգացումը կապում է ինտելեկտուալ զարգացման մակարդակի հետ: Նա համարում էր, որ բարոյական դատողությունների ներքնայնացումը երեխաների մոտ տեղի է ունենում զարգացող մտածողական կառուցվածքների և աստիճանաբար ընդլայնվող սոցիալական փորձի փոխազդեցության արդյունքում:

Գլուխ Ա Արժեքային համակարգ

Արժեքային կրթությունը ի սկզբանե կրթության անքակտելի բաղադրիչն է եղել: Ինչպես ամբողջ աշխարհում, Հայաստանում էլ այսօր արժեքային կրթությունը հասարակությանը հուզող խնդիրներից մեկն է: Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները:

Հետազոտողների մի լայն շրջանակ ուսումնասիրում է արժեքները՝ վերջիններս դիտարկելով մշակութային տարբեր խմբերում առկա արժեքային համակարգի տարբերությունները և նմանությունները: Փիլիսոփայության մեջ գոյություն ունի արժեքների բնույթի մասին ուսմունք, որը կոչվում է *աքսիոլոգիա* (հունարեն՝ ἀξία - արժեք, λόγος - բան, խոսք, բառացի՝ ուսմունք արժեքների մասին): Աքսիոլոգիան փիլիսոփայական ուսմունք է արժեքների բնույթի, իրականության մեջ նրանց տեղի և արժեքային աշխարհի կառուցվածքի մասին:

Արժեքների ձևավորման ուսումնասիրության մեջ իր ուրույն տեղն ունի Մ. Մեսսեյը: Հեղինակը կարծում է , որ մարդու արժեքային համակարգը ձևավորվում է մի քանի փուլերի ընթացքում.

1-ին փուլ – *Դրոշմի*: Այս փուլը ընդգրկում է երեխայի՝ մինչև 7 տարեկան դառնալը: Ըստ Մ. Մեսսեյի ՝ երեխաներն այս փուլում նման են «սպունգի», կլանում են այն ամենը, ինչը տեղի է ունենում իրենց

շրջապատում և ընդունում են գրեթե ամեն ինչ որպես բացարձակ ճշմարտություն, հատկապես, եթե դա փոխանցում են ծնողները:

2-րդ փուլ – ***Կրկնօրինակման:*** Այս փուլը ընդգրկում է երեխաների 8-13 տարեկան հասակը: Այս փուլում երեխաները կրկնօրինակում են իրենց ծնողներին, ուսուցիչներին, համադասարանցիներին, շրջապատող մարդկանց:

3- րդ փուլ – ***Սոցիալականացման:*** Այս փուլը տևում է 13 տարեկանից մինչև 21 տարեկանը : Այս փուլում երեխաների համար շատ կարևոր է իրենց հասակակիցների կարծիքը և կրում են նրանց ուղիղ ազդեցությունը իրենց վրա: Արժեքների ձևավորման այս փուլում, շատ մեծ ազդեցություն ունեն հուզական իրադարձությունները:

Արժեքների ուսումնասիրության բնագավառում իր ուրույն հետազոտությունն է կատարել Շվարցը: Ըստ հեղինակի, երբ մարդ մտածում է արժեքների մասին առաջին հերթին առանձնացնում է, թե որ արժեքներն են առավել կարևոր իր համար կյանքում: Որոշակի կոնկրետ արժեք կարող է կարևոր լինել մեկի համար, բայց բացարձակ անկարևոր մյուսի համար: Արժեքների տեսություններում կարևորվում է այն հայեցակարգը, որտեղ առանձնացվում են արժեքների ներքոնշյալ վեց հատկանիշները.

Արժեքները համոզմունքներ են: Մարդիկ, որոնց համար անկախությունը կարևոր արժեք է, «սթափվում» են , երբ նրանց անկախությունը վտանգվում է, հուսահատվում են, երբ անկարող են լինում այն պաշտպանելու, և վերջապես երջանիկ են, երբ կարող են վայելել այն:

Արժեքները կապված են ցանկալի նպատակների հետ, որոնք մոտիվացնում են մարդուն կատարելու որոշակի գործողություններ: Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող գործոններից են

ավանդական միջոցները, այսինքն՝ աշակերտի մեջ աշխարհի նկատմամբ վերաբերմունքի և հասարակության հետ հարաբերության, սեփական անձի նկատմամբ վերաբերմունքի ձևավորումը ընտանիքի և սոցիալական միջավայրի միջոցով: Սակայն սովորողների այդ միջավայրին բնորոշ արժեքների, կանոնների, չափանիշների, հայացքների յուրացումը միշտ չէ, որ համապատասխանում է հասարակության կողմից ընդունված արժեքներին և խրախուսելի չափանիշներին: Ավանդական միջոցների յուրացումը լինում է չգիտակցված՝ վարքի ընդունված կանոններն ընդօրինակելու միջոցով:

Արժեհամակարգային դաստիարակությունը դրսևորվում է աշակերտի վարքի ու շփման հարաբերությունների որոշ մակարդակում՝ խոսքում, արտաքին տեսքում, ազատ ժամանակն անցկացնելու ձևում, ապրելակերպում և այլն: Տարիքային դաստիարակությանը բնորոշ են հակումը դեպի մշակույթի որոշակի շերտերը: Այստեղ ամենակարևորը մանկավարժների կողմից «աշակերտների մեջ կյանքի նկատմամբ դրական վերաբերմունքի, ապրած ամեն մի օրվա համար ուրախության զգացում ապրելու և շնորհակալ լինելու ունակության ձևավորումն է» :

Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը միջանձնային հարաբերություններն են կամ իրենց համար հեղինակավոր, երևելի մարդկանց հետ շփումները (ծնողներ, ուսուցիչներ, մեծահասակներ, ընկերներ և այլն): Այս հեղինակավոր անձինք կարող են լինել նաև աշակերտի վրա ներգործող հասարակական այս կամ այն կազմակերպությունների անդամները, դպրոցի տնօրենը, դասղեկը, ուսուցիչը և այլն: Աշակերտը նրանցից կարող է ստանալ արժեքների վերաբերյալ ինչպես դրական մոդելներ, այդպես նաև բացասական: Բացասական մոդելները հակում ունեն ձևավորվելու ավելի արագ և անդառնալի բացասական ազդեցություն կարող են

ունենալ սովորողի անձի արժեքային ճիշտ դաստիարակության վրա: Հետևաբար արժեքների դաստիարակության այս բնագավառը պահանջում է մանկավարժական խստագույն վերահսկողություն և ըստ հարկի՝ նաև միջամտություն:

Աշակերտի արժեքների ձևավորման խնդիրները բնականաբար լուծվում են ոչ միայն ընտանիքում, այլ նաև ուսումնական հաստատություններում՝ ուսումնադաստիարակչական գործընթացի միջոցով: Ուսուցման դաստիարակչական ներգործությունը օբյեկտիվ օրինաչափություն է, որովհետև աշակերտների համար ուսուցումը գործունեության հիմնական տեսակն է, դրա համար էլ այն կարևոր դեր է կատարում նրանց անձի ձևավորման գործում: Ուսուցման գործընթացի դաստիարակչական ներգործության հարուստ աղբյուր է բուն գործընթացի բովանդակությունը, որովհետև ընտրելով դաստիարակչական առումով հիմնական գաղափարները, օրենքները և հասկացությունները՝ ուսուցիչը հնարավորություն է ստանում առարկայական ծրագրերի բովանդակության յուրացման միջոցով աշակերտների մեջ սերմանել քաղաքական, իրավական, բարոյական, գեղագիտական, բնապահպանական և այլ գիտելիքներ ու վերաբերմունք:

Յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիարակչական խնդիրներ է լուծում՝ հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները, որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում: Նա առանձնացնում է ընդհանուր դաստիարակչական խնդիրները, որոնք առանձին աշակերտների մոտ հաճախակի են դրսևորվում: Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով (անհատական, խմբային, էքսկուրսիա, դասղեկական ժամ, արտադասարանական միջոցառումներ

և այլն) առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը:

ԳԼՈՒԽ Բ

Գեղարվեստական կրթությունը և դերը արժեհամակարգի ձևավորման զարգացման գործում

Գեղարվեստական կրթության գործընթացը ապահովում է անհատի կողմից ազգային և համամարդկային մշակույթի ընկալումն ու յուրացումը,ինչը անհատի ձևավորման , հոգևոր, մտավոր և ստեղծագործական անհատակության զարգացման կարևորագույն միջոցներից է : Կարևոր է նկատի ունենալ, որ սովորողների գեղարվեստական հմտությունների զարգացումն ու արժեքային համակարգի ձևավորումը դիտվում են որպես բոլոր թեմաների ուսուցմանն ուղեկցող խնդիրներ: Երաժշտությունը կատարյալ միջոց է բոլոր երեխաներին և մասնավորապես՝ կրթական առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին ուսուցման գործընթացում ներառելու համար: Երաժշտական փորձառությունը կարող է նրանց համար արդյունավետ լինել լեզվական, ճանաչողական և շարժողական կարողությունների զարգացման համար՝ միաժամանակ նպաստավոր պայմաններ ստեղծելով սոցիալականացման համար: Արվեստը հասկանալու բանալին առօրեականի և գեղարվեստականի փոխհարաբերության ընկալումն է, սովորողը արվեստի առարկաների դասավանդման ընթացքում իր ստացած գիտելիքների, ձևավորված հմտությունների, վերաբերմունքի և արժեքների շնորհիվ պետք է հասկանա, ընկալի, թե ինչպես է առօրեականը արվեստի միջոցով դառնում կատարյալ, այսինքն՝ գեղարվեստական: Գեղագիտական դաստիարակությունը գեղեցիկը ընկալելու, զգալու, գնահատելու և գեղագիտական արժեքներ ստեղծելու, համապատասխան

ընդունակությունների, գեղագիտական գործունեության կարողությունների ու հմտությունների, գեղագիտական ճաշակի ձևավորման գործընթաց է: Այն անհրաժեշտ է ամեն մի դպրոցականի՝ անկախ նրա օժտվածության աստիճանից և ապագա մասնագիտությունից: Սովորողի գեղագիտական դաստիարակությունը բարդ և հետևողական գործընթաց է, որը իրականացվում է ոչ միայն արվեստի առարկաների դասավանդման ընթացքում, այլև արտադասարանական միջոցառումների ժամանակ, որի ընթացքում սովորողը լրացուցիչ տեղեկություններ է ստանում տվյալ թեմայի վերաբերյալ, հաճախ ինքն է նախապատրաստում սցենարը, կարդում է բազմաթիվ նոր նյութեր և տեղեկություններ, միաժամանակ հաղորդակցվելու և ինքնուրույն գեղարվեստական գործունեություն ծավալելու միջոցով շփվում է արվեստի տարբեր տեսակների հետ (երաժշտություն, գրականություն, կերպարվեստ,դերասանական խաղ,պար և այլն), որով ընդլայնվում է նրա մտահորիզոնը, ձևավորում, զարգացնում նրա գեղագիտական ճաշակը:

Արվեստը հասարակական գիտակցության ձև է, մարդու ստեղծագործ աշխատանքի և հոգևոր մշակույթի տեսակ, իրականության ծանաչման յուրահատուկ եղանակ: Իրականությունը արվեստի միջոցով արտահայտվում է գեղագիտորեն, գեղարվեստական կերպարների միջոցով՝ ողբերգական կամ հերոսական, վեհ կամ նսեմ և հատկապես գեղեցիկ կողմերը: Գեղագիտական երևույթները ընկալվում են լսողությամբ և տեսողությամբ: Օրինակ նկարիչը պատկերելով իր ժամանակի տգե՛ղ, այլանդակ երևույթները՝ արվեստագետը ժամանակակիցներին ստիպում է այդ երևույթները վերապրել անբարյացակամության զգացումով և ձգտել դեպի գեղեցիկը, վեհը:

Երաժշտության մեջ օրինակ Վոլֆգանգ Ամադեուս Մոցարտի ստեղծագործությունները շատ լուսավոր են և նույնիսկ «Ռեքվիեմ»-ը, որն սգո հանդիսության ստեղծագործություն է, գրված է լուսավոր լավատեսությամբ: Առհասարակ Մոցարտի երաժշտությունը ձևավորում է անհատի մոտ ոչ միայն բարու և լուսավորի մասին վառ պատկերացումներ այլև ունի թերապեվտիկ հատկություններ:

Այդ թվում են Նաև Անտոնիո Վիվալդին իր «Տարվա եղանակները» 4 կոնցերտից բաղկացաշ ստեղծագործությամբ, Լյուդվիգ Վան Բեթհովենի ստեղծագործությունները՝ նա լսողություն չունենալով հանդերձ ստեղծել է շատ հայտնի գործեր: Ուսումնասիրությունները, որոնք տարվում են երաժշտական ճանաչողության ոլորտում, փորձում են բացահայտել երաժշտություն լսելու հետ կապված բարդ մտավոր գործընթացները:

Լսողություն չունեցող մարդիկ կարող են զգալ երաժշտությունը իրենց մարմնում տեղի ունեցող տատանումների միջոցով, որին կարելի է հասնել այն դեպքում, երբ անհատը իր ձեռքում պահում է ռեզոնանտ, սնամեջ առարկա:

Բախի ստեղծագործության բազմազան ու խոր ժառանգության վեհությունը գնահատելով՝ Բեթհովենը գրել է՝ «Nicht Bach! - Meer solte er heiften» - «Ոչ թե առվակ, այլ Ծո՛վ պետք է լիներ նրա անունը»:

Բախի ստեղծագործական ժառանգությունը չափազանց մեծ է: Նրա «Պասսիոնը ըստ Մատթեոսի» և «Պասսիոնը ըստ Հովհաննեսի» հոգևոր բովանդակության ստեղծագործություններում ընդհանրացված է ժողովրդի բարօրության համար իրեն զոհաբերող մարդու տանջանքի և բարոյական տոկունության թեման:

Կոմիտասի ստեղծագործությունները, որոնց հետ առարկայի դասավանդման գործընթացում առնչվում են սովորողները,

տիեզերական վեհություն ունեն և ազգային արժեհամակարգի ձևավորման գանձարան են :

Կոմիտասի կյանքը և ստեղծագործական ուղին ուսումնասիրելով աշակերտները ավելի ու ավելի են հարստացնում իրենց արժեհամակարգը: Կոմիտասի անձնական օրինակը և նրա անցած ուղին փաստող հայտնի գործիչների հուշերից դրվագ:

Բեռլին գտնված միջոցին հայ ժողովրդական երգերը անձնապես ցուցադրած համերգեն վերջ, Բեռլինի օպերայի տնօրենը անձամբ կհրավիրե զինքը իբրև օպերայի գլխավոր երգիչ և կխոստանա բացառիկ վճարում: Կոմիտասը կպատասխանե անոր. «Իմ երգչի կարողությունները մեկ նպատակի միայն կծառայեն, մեծ ժողովուրդիս երգն ու երաժշտությունը ծանոթացնել երաժշտական աշխարհին և ապացուցել, որ հայ ստեղծագործ ժողովուրդը սկզբնական դարերեն ունեցեր է իր ինքնուրույն երգն ու երաժշտությունը»...:

Հրաչյա Աճառյան

Կոմիտասը մեր ժողովրդի հպարտությունն է, նրա գործը՝ մեր ազգային անսպառ հարստությունը... Նա հայտնագործել է մեր ազգային երգը, հայկական երաժշտությունը, ազգային մելոսը՝ ինքնուրույն և անաղարտ: Նա հիմն է դրել ազգային երաժշտական կուլտուրային... Կոմիտասը հայ երգով լույս աշխարհ հանեց դարերի խավարի մեջ կեղեքված ժողովրդի խուլ բողոքն ու ցասումը բռնության, ստրկության դեմ. նրա խեղդված վիշտը, իրավազուրկ կյանքը և պայծառ ապագայի հանդեպ տածած հավատը:

Ավետիք Իսահակյան

Ոչ ոք ինձ չի կարող մեղադրել չափազանցության համար, եթե ես ասեմ, որ Կոմիտասի այդ համերգը (Փարիզ, 1906) մի հեղաշրջում էր և իր հայտնությամբ զարմացրեց մեզ: Ներկաներից ոչ ոք, ի բացառյալ նուրբ

գիտակների, պատկերացնել չի կարող այդ արվեստի գեղեցկությունը, որը, ըստ էության, ոչ եվրոպական է, ոչ արևելյան, բայց եզակի է իր տեսակի մեջ:

Սորբոնի համալսարանի պրոֆեսոր, երաժշտական քննադատ՝ Էուի Էալուա

ԳԼՈՒԽ Գ

Սովորողների մեջ արժեհամակարգի ձևավորումը Երաժշտություն առարկայի դասավանդման ընթացքում

Երաժշտությունը, ինչպես և արվեստի մյուս տեսակները, արտացոլում և պատկերում է մեր իրականությունը՝ շրջակա աշխարհը, մարդկանց, բնության երևույթները: Երաժշտությունը առաջին հերթին հաղորդակցության միջոց է մարդկանց միջև, սերունդների միջև, տարբեր ազգերի միջև, հատուկ միջոց է ինքնաարտահայտվելու ինքն իրեն և մյուսներին հասկանալու համար: Իսկ առօրյա կյանքում երաժշտությունը ուղեկցում է մարդուն ամենուր, բացահայտում է նրա վերաբերմունքը շրջակա աշխարհի նկատմամբ, հարստացնում է նրա հոգեկան աշխարհը, օգնում է նրան ապրել, աշխատել և ստեղծագործել:

Երաժշտական կրթությունը ուսումնական գործընթաց է, որն ուղղված է այն կարողունակությունների ձևավորմանը, որոնց միջոցով զարգանում է ակտիվ, անհատական մոտիվացիայով սովորող, որը ընդունակ է ինքնակրթվել և ամբողջ կյանքում պահպանել հետաքրքրությունը բարձրակարգ երաժշտության և ընդհանրապես արվեստի նկատմամբ: Այն նպաստում է նաև սովորողի մտահորիզոնի ընդլայնմանը, երևակայության, ստեղծագործական և վերլուծական մտածողության զարգացմանը, գեղագիտական և բարոյական չափանիշների, հայրենասիրական և մարդասիրական զգացումների ձևավորմանը, կյանքի և շրջապատող աշխարհի նկատմամբ ստեղծագործական վերաբերմունքի դրսևորմանը: Խոսելով ընդհանուր սովորողների մտահորիզոնի ընդլայնման և արժեքային համակարգի ձևավորման

մասին պետք է հաշվի առնել նաև այն, որ այս գործում իր կարևորագույն դերը ունի մեր ազգային մշակույթը:

Ազգային մշակույթ ասելով՝ հասկանում ենք արժեքների այնպիսի համակարգ, որը բնորոշ է կոնկրետ ազգի, ստեղծվել է այդ ազգի մշակութային համակարգում: Իսկ ազգի մշակույթը դիտարկելիս ի նկատի ունենք հատկապես այն արժեքների ամբողջությունը, որոնք ժամանակին, մշակութային փոխներթափանցման միջոցով վերցրել է կոնկրետ ազգը և դարերի ընթացքում հանդես բերել սեփական մոտեցումներով:

Ազգային երգը, ազգային մշակույթի արժեքների համակարգում գրավելով իր կարևորագույն տեղերից մեկը, իր վրա է կրում ազգային գենետիկ կոդը, առաքելությունը, ազգային լեզվամտածողությունը, կեցությունը, ներքին հոգեկան զգացումի արտահայտության ձևը:

Կոմիտասը փայլուն գիտեր ազգային երգի արժեքը, նա գիտեր՝ ինչ երգեր է գրառում և թողնում սերունդներին: Այդ պատճառով էլ հենց նրա գրառած երգերն ընտրեց կատարման ու տարածման համար:

Ազգային երգը, բացի Կոմիտասից, մեր երգահաններից գրառել են Քրիստափոր Կարա-Մուրզան, Սպիրիդոն Մելիքյանը, Մակար Եկմալյանը և այլոք: Իսկ ո՞րն էր Կոմիտասի արժեքը և յուրահատկությունն այդ գործում: Տիգրան Մանսուրյանը հայ ազգային երգերի, պարեղանակների Կոմիտասի գրառումները շատ պատկերավոր համեմատում էր թիթեռի թռիչքը թղթի վրա զետեղելու հետ: Ընդ որում այնքան վարպետորեն, որ մեղեդին բացարձակապես չի կորցնում իր բնական հնչողությունը՝ ներկայանալով ճիշտ այն գույներով, որպիսին ստեղծվել է: Նրա գրառած երգերը իսկապես արժեք են, և դրանց մեջ ես տեսա նրա խմբերգերի բնագիր երգերը ու հիացած զարմացա՝ ինչպես է կարողացել այդ պարզ մեղեդիների արժեքը ոչ միայն հասկանալ, այլև

դրանք համադրելով ստանալ երաժշտական գունային հարուստ կտավ ու սերունդներին թողնել խմբերգերի անգնահատելի հարուստ ժառանգություն»:

«Երաժշտություն» առարկան հանրակրթական դպրոցում դիտվում է որպես արվեստի դասվանդման միջոց, որի հիմքում ազգային և համամարդկային երաժշտությունն է: Այն կրթության և դասիարակության բնագավռի կարևորագույն բաղադրամասերից մեկն է, առանց որի թերի կլինի ժամանակակից մարդու մտավոր և հոգևոր զարգացումը:

Պատահական չէ, որ 1-ին դասարանում երաժշտության դասավանդումը սովորողների մոտ պետք է

- ձևավորի և զարգացնի երեխաների գեղագիտական ճաշակը
- Հայկական ժողովրդական, դասական և համաշխարհային բարձրարժեք երաժշտության միջոցով դաստիարակի երաժշտությունը գնահատող, գիտակ և ակտիվ ունկնդիր:

1-7 դասարանների երաժշտության դասընթացի բովանդակությունը հարուստ է հոգևոր մշակույթի գանձերով ՝ սկսած հայ ազգային երաժշտության ակունքներից կոմպոզիտորական ստեղծագործություններից մինչև 21-րդ դարի ազգային և համաշխաարհային գլուխգորխոցները: Բացի արվեստի ստեղծագործությունների վերլուծությունից՝ ուսումնական նյութերում բացահայտվում են մշակույթի զարգացման գործընթացները, գեղագիտական գործընթացները, գեղագիտական տարբեր ուղղությունների ու միտումների բախումը, տարբեր ժողովուրդների մշակութային նվաճումները, առանձին արվեստագետների գեղարվեստական լեզուն և արտահայտչամիջոցներ: Այս ամենի շնորհիվ միայն կարելի է հասնել աշակերտների արժեքային

համակարգերի ձևավորմանը, իսկ արդեն հետագայում ավելի խորացնելով ու ձեռք բերելով հմտություններ, մենք փորձում ենք օգտագործել այն հզոր միջոցը, այն է երաժշտության հուզական, կապը արվեստի տարբեր ճյուրի հետ սինթեզելով ու հիմք դնելով նոր գեղագիտապես ու արժեքներով օժտված ու դասիարակված աշակերտների:

5-7-րդ դասարանցիների տարիքային և հոգեբանական բազում առանձնահատկություններ կան, որոնք կապված են նրանց երաժշտական ընդունակությունների զարգացման ու մարդկային լավագույն արժեքների ընկալման հետ: Այդ տարիքում ակտիվ զարգանում են երեխաների մտավոր, հոգևոր, ֆիզիկական ու գեղագիտական կարողություններն ու հմտությունները:

5-7-րդ դասարանցիները բնութագրվում են, որպես ակտիվ, շարժուն աշակերտներ, որոնց հետաքրքրությունների շրջանակը մեծ է ու բազմակողմանի: Նրանց եզրահանգումներն ավելի ինքնուրույն են, երևակայությունը՝ կոնկրետից վերացականին գնացող: Այս տարիքում սկսում է ձևավորվել իրականության հանդեպ ստեղծագործական վերաբերմունքը: Այս շրջանում զարգանում են երաժշտության նկատմամբ աշակերտի հետաքրքրությունները, նրա բնավորությունը, ազգային դիմագիծը, բարոյահոգեբանակն խառնվածքը և այլն: Ակտիվ են զարգանում ճանաչողական ունակությունները՝ ընկալումը, հիշողությունը, մտածողությունը, կարողությունը, ստեղծագործական երևակայությունը, առաջ են գալիս ավելի բարձր գիտակցությունը, բարոյական նորմերի ընկալումը և գեղագիտական զգացողությունը:

Դպրոցական առարկաների համակարգում արվեստները, մասնավորապես երաժշտությունը, հանդես են գալիս ոչ միայն ինրև

սովորողների գեղագիտական դաստիարակությունը ապահովող, նրանց հուզազգացմունքային զարգացումը կազմակերպող,այլ նաև կրթական համակարգը մարդկայնացնող միջոց: Պատահական չէ, որ դեռ 5-րդ դարում Սահակ-Մեսրոպյան առաջին հայկական դպրոցներում, երաժշտությանը տրվել է կարևոր դեր և նշանակություն: Փոխվում են ժամանակները,փոխվում են նաև ուսուցման ու դաստիարակության պահանջներն ու բովանդակությունը,մեթոդները,սակայն երաժշտությունը շարունակում է կատարել դաստիարակող,արժեքներ ձևավորով և զարգացնող իր առաքելությունը:

Եզրակացություն

Այս հետազոտական աշխատանքը շոշափում է մի այնպիսի թեմա, որը անկասկած շատ մեծ նշանակություն ունի Հայաստանի և հայ ժողովրդի համար: Խոսքը գնում է ազգային արժեքային համակարգի ձևավորման մասին երաժշտության դասերին:

- Հոգևոր և բարոյագեղագիտական բարձր արժեքներով օժտված մարդ և ակտիվ ունկնդիր:
- Երեխայի երաժշտական դաստիարակության հիմքում դրվում է ազգային երաժշտությունը՝ չբացառելով նաև այլ ժողովուրդների և դասական կոմպոզիտորների ստեղծագործությունները:
- Ձևավորել և զարգացնել սովորողների երաժշտական ընդունակությունները, երգչային ձայնը, կատարողական հմտությունները
- Զարգացնել երաժշտական ստեղծագործություններ բնույթը,բովանդակությունը,ձևը, կառուցվածքը հասկանալու և ինքնուրույն եզրահանգումներ կատարելու կարողությունը
- Բացահայտել և զարգացնել սովորողների ստեղծագործական երևակայությունը, նպաստել ինքնճանաչմանը և ինքնարտահայտմանը
- Սովորելցնել ընկալել երաժշտության բնույթը, երաժշտական կերպարների զարգացումը և արտահայտել մարմնի շարժումներով,
- Արմատավորել մարմնի շարժումներին տիրապետելու, պարային շարժումներ կատարելու կարողություն, ամբողջական պարերի իմացություն:

Հենց այս պատճառով է, որ կրթության հենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը, իսկ երբ վերանում են արժեքների ձևավորման ազգային և համամարդկային ընդհանրական չափանիշները, և վարքի կարգավորիչ են դառնում իրավիճակն ու պահի նպատակահարմարությունը, արժեհամակարգի գոյությունը կամ բացակայությունը դառնում է ազգային-հասարակական կարևորության խնդիր, որովհետև արժեհամակարգը պետք է ձևավորվի ազգային հոգևոր-բարոյական ընդհանրականության հիմքի վրա:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ա. Գևորգյան, Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում, Եր., 2002, էջ 65

2. Բաբանսկի Յու.-Աշակերտների դաստիրակությունը կոմպլեքսային մոտեցում:

3. Մուդրիիկ Ա.Վ.-Դպրոցականի անձը և նրա դաստիրակությունը կոլեկտիվում

4. Յու.Յուզբաշյան , Ա.Ա.Փահլևանյան, Վ.Ի Ավետիսյան Երաժշտությունը 1-4-րդ դասարաններում: Ուսուցչի մեթոդական ձեռնարկ:

5. Յու.Յուզբաշյան , Ա.Ա.Փահլևանյան, Վ.Ի Ավետիսյան Երաժշտությունը 5-7-րդ դասարաններում: Ուսուցչի մեթոդական ձեռնարկ;